

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հյուսիսային համալսարանի

բանասիրություն և մանկավարժության ֆակուլտետի

դեկանի 2017-2018 ուստարվա

2017-2018 ուստարում Հյուսիսային համալսարանի բանասիրության և մանկավարժության ֆակուլտետում կատարվել է զգալի աշխատանք՝ դեկանատի աշխատանքային պլանին համապատասխան:

Մինչև ուստարվա I կիսամյակն սկսվելը կազմվել են բակալավրիատի՝ հեռակա-առկա, առկա ուսուցման և հեռակա I կուրսի սկզբնական ուսուցման դասացուցակները՝ ուսումնական պլաններին համապատասխան, ինչպես նաև՝ հեռակա ուսուցման մագիստրատուրայի համար: Ուսումնական տարվա սկզբում յուրաքանչյուր կուրսի համար կազմվել է դասամատյան, և ողջ կիսամյակի ընթացքում հետևողական աշխատանք է կատարվել դրանցում գրառումների ճշտության և ամբողջականության վերահսկողության ուղղությամբ: Դասամատյաններում լրացումները կատարվել են ուսումնական պլաններին և առարկայական ծրագրերին համապատասխան: Դեկանի և դեկանի օգնականների կողմից ամբողջ կիսամյակի ընթացքում վերահսկվել է ուսումնական գործընթացի պատշաճ կազմակերպումը՝ ըստ ուսումնական ժամանակացույցերի և դասացուցակների:

Ուսանողների փոխադրման, հեռացման դեպքերում կիսամյակի սկզբում ռեկ-տորին ներկայացվել են զեկուցագրեր, իսկ բուհից բուհ տեղափոխության կամ առաջին կուրս ընդունված ուսանողների համար՝ առաջարկներ՝ ուսանողների հրամանագրման նպատակով: Տեղափոխված (բուհից բուհ, առկա ուսուցումից հեռակա կամ հակառակը, ինչպես նաև բուհի ներսում ֆակուլտետից ֆակուլտետ) ուսանողների համար ժամանակին կազմվել են տարբերությունների հանձնման տեղեկագրեր և տրամադրվել ուսանողներին: Բուհից դուրս եկող ուսանողների համար և բուհի ներսում տեղափոխությունների դեպքում կազմվել են ակադեմիական տեղեկանքներ: Մինչև յուրաքանչյուր ամսվա 15-ն ընդհանուր բաժին և հաշվապահություն է ներկայացվել ուսանողների թվաքանակ՝ ըստ կուրսերի, ուսուցման ձևերի և կրթական ծրագրերի:

Ուսումնական տարվա ընթացքում յուրաքանչյուր ամսվա վերջում իմ կողմից հաշվապահություն են ներկայացվել դասախոսների ամսական ծանրաբեռնվածության փաստացի կատարողականի, ինչպես նաև բաց թողնված դասաժամերի վերաբերյալ տեղեկություններ: Հետևողական աշխատանք է կատարվել բաց թողնված դասաժամերի լրացումն ապահովելու ուղղությամբ: Մեծ ուշադրություն է դարձվել ուսանողների հաճախումներին՝ կատարելով նրանց ամենօրյա ընթացիկ հաշվառում: Հսկայական աշխատանք է կատարվել ուսանողների անհարգելի բացակայությունները նվազագույնի հասցնելու ուղղությամբ:

Ռեկտորատում հաստատված ժամկետում ժամանակին կազմվել են նախորդ կիսամյակների պարտքերի մարման գրաֆիկները՝ բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցմամբ սովորողների համար: Ուսումնական ժամանակացույցով նախատեսված ժամկետներում կազմվել են միջանկյալ և եզրափակիչ քննությունների գրաֆիկները և փակցվել դասատախտակին: Չափազանց կարևորում եմ ուսանողների ուսման որակը բարձրացնելու նպատակով դասախոսների կողմից կազմակերպվող խորհրդատվական պարապմունքները, ինչն իրականացվել է կիսամյակի ողջ ընթացքում և սովել իր զգալի և ցանկալի արդյունքը:

Ուսումնական ժամանակացույցով նախատեսված ժամկետից մեկ, նույնիսկ երկու շաբաթ առաջ կազմվել են միջանկյալ և եզրափակիչ քննությունների, ստուգաթքների տեղեկագրերը, ինչպես նաև ամփոփաթերթերը՝ ըստ կուրսերի, ուսուցման ձևերի և կրթական ծրագրերի:

25.09.2017թ.-ից հեռակա ուսուցմամբ սովորողներին հանձնարարվել են 1-ին, իսկ 01.03.2018 թ.-ից՝ 2-րդ կիսամյակի ստուգողական և կուրսային աշխատանքների թեմաները, և հետևողականորեն վերահսկել ենք դրանց ճիշտ կատարումը և նախատեսված ժամկետներում հանձնումը՝ ուսանողներին ցուցաբերելով անհրաժեշտ օգնություն, տալով համապատասխան ցուցումներ և տրամադրելով մասնագիտական գրականություն:

2 կիսամյակների քննաշրջանների ավարտից հետո կազմել եմ հաշվետվություններ առկա և հեռակա ուսուցմամբ ուսանողների և մագիստրանտների առաջադիմության վերաբերյալ, որի արդյունքները հրապարակվել են ռեկտորատի համապատասխան նիստում:

Ուսումնական տարվա ընթացքում ամբիոնի վարիչների, դասախոսների և իմ կողմից կատարվել են բազմաթիվ դասալուսման փորձի փոխանակման, դասավանդման որակի ուսումնասիրության և/կամ բարձրացման նպատակով:

Մասնավորապես, իմ կողմից կատարվել են հետևյալ դասալուսմանները.

ա/ առկա ուսուցման մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության (ն/դ մասնագիտացմամբ) III կուրսում՝ Մանկական գրականություն առարկայից Գ. Հակոբյանի մոտ:Դասի թեման էր՝ «Վեպի կերպարները»>>:

բ/ առկա ուսուցման մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության ( դ/պ մասնագիտացմամբ) II կուրսում՝ Մանկավարժություն առարկայից Ն. Սարգսյանի մոտ: Դասի թեման էր՝ «Մտավոր դաստիարակություն»>>:

գ/ հեռակա ուսուցման մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության (ն/դ մասնագիտացմամբ) III կուրսում՝ Ն/Դ մանկավարժություն առարկայից Ն. Մարկոսյանի մոտ: Դասի թեման էր՝ «Կրթության համակարգի կառուցվածքը»>>:

դ/ հեռակա ուսուցման մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության ( դ/պ մասնագիտացմամբ) II կուրսում՝ Մանկավարժական հաղորդակցում առարկայից Է. Ավանեսովի մոտ: Դասի թեման էր՝ «Հռետորական արվեստի բաղադրամասերը»>>:

Հարկ եմ համարում նշել, որ 2017-2018 ուստարվա ավարտական ամփոփիչ քննությունները կազմակերպվեցին և անցկացվեցին բավական բարձր մակարդակով: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովն իր գոհունակությունն արտահայտեց շրջանավարտների բարձր պատրաստվածության և մասնագիտական գիտելիքների պաշարի ու պրակտիկ փորձի վերաբերյալ: 2017-18 ուսումնական տարում թույլատրվել է ամփոփիչ ատեստավորման քննություններին՝ 139, մագիստրական թեզերի պաշտպանությանը՝ 10 հոգի, որից դրական գնահատական ստացել են 135 շրջանավարտներ, մագիստրոսի կրթական ծրագրով՝ 10 հոգի: Գերազանցության դիպլոմի արժանացել են 4 բակալավր և 1 մագիստրոս:

Ցանկանում եմ նշել, որ ֆակուլտետի ուսանողները ակտիվ մասնակցություն են ցուցաբերել համալսարանում կազմակերպվող տարաբնույթ ու բովանդակալից միջոցառումներին, համաքաղաքային և հանրապետական շաբաթօրյակներին:

Ֆակուլտետի ուսանողները համալսարանի մյուս ֆակուլտետների ուսանողների հետ ամեն տարի ապրիլի 24-ին մասնակցում են Ջահերով երթին, իսկ հունիսի 29-ին ակտիվ մասնակցություն ունեցան Հյուսիսային համալսարանի օրվան նվիրված միջոցառմանը, որի ընթացքում հանձնվեցին ֆակուլտետի շրջանավարտների գերազանցության դիպլոմները, և հրապարակվեցին լավագույն շրջանավարտների անունները:

Հուլիսի 9-ին, 10-ին, և 11-ին հանձնվեցին ֆակուլտետի շրջանավարտների սովորական դիպլոմները:

Դեկանի պաշտոնակատար՝

Մ.Այվազյան